



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ \_\_\_\_\_

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2019 թ.

«ԹԵՐԹ ԷՅ ԷՄ >> ԿԱՅՔԻ  
ԼՐԱԳՐՈՂ ԱՄԱԼՅԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

(հեռ. 094339893, էլ.փոստ araqelyanamalya5@gmail.com )

Ի պատասխան Ձեր 29.07.2019թ.-ի հարցմանը

Հարգելի տիկին Առաքելյան

2019թ. պետական բյուջեով ՀՀ Լոռու մարզպետարանի պահպանման ծախսերի «Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում» հոդվածով նախատեսված գումարներից 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ 2018 թվականի երկրորդ կիսամյակի կատարողականների հիման վրա համաձայն «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. հոկտեմբերի 20-ի թիվ 1510-Ն որոշման տրվել են պարգևատրումներ մարզպետարանի քաղաքացիական ծառայողներին 18455.3 հազ. դրամ գումարի չափով:

«Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով նախատեսված գումարներից 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի, 22-րդ հոդվածի 9-րդ կետի հատուկ առաջադրանքները և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար մարզպետարանի աշխատակիցները պարգևատրվել են 37046.3 հազ. դրամ գումարի չափով: Պարգևատրումները վճարվել են աշխատակիցներին ոչ հավասարաչափ, հաշվի են առնվել նրանց աշխատանքային ծանրաբեռնվածությունը և տրված հանձնարարականների կատարման արդյունավետությունը: Վերը նշված գումարների մեջ ներառված են նաև հարկերը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները, որոնց մեջ մտնում են նաև պարգևատրման գումարները, աշխատողի անձնական տվյալներ են և համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 134-րդ հոդվածի

առանց աշխատողի գրավոր համաձայնության ենթակա չեն հրապարակման: Աշխատողի անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ հարցերը կարգավորվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 131-136 հոդվածներով և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով:

 Invalid signature

X 

**ԱՄՐԱՎԻՐԱԿԱՆ**

Հարգանքով՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ